



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ ՄԱՆՈՎԿԵԱՆ

Ամուցարդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 11831
Մարտ 12, 1965

Արժանաշնորհ
Տ. Առնակ ԶՀՆՅ. Գասպարեան
Հոգեւոր Հովիւ Պրբկըն Քառնդիի Համայնքի
եւ Նախագահ Պատուարժան Միսկան Խորհուրդի
Թէնընչիւմ

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք Ձեր 1965 Մարտ 9 թուակիր տեղեկագիրը, որով
կը տեղեկացնէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 31ին գումարուած
Ձեր Տարեկան Միսկան ժողովին մէջ կատարուած է Միսկան Խորհուրդի
մասնակցի ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը,
կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած
է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալ ներք իրրեւ անդամ Միս-
կան Խորհուրդի.

Տիարք՝ Մարք Զուքազեան
Վարդան Վիթթըր Արզումանեան
Զաւէն Հալընեան
Տիգրան Ռիչըրտ Թոնամեան
Յակոբ Հանինլեան
Ճան Զրունեան

Կը յանձնարարենք որ Միսկան Խորհուրդի նոր դիւանի անուն-
հասցէները Առաջնորդարան ղրկէք առաջին պատեհութեամբ:

Այսու, երհնելով Միսկան Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք
Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէու-
թեան տարի մը, ի Պայծառութիւն Ա. Եկեղեցւոյդ եւ ի Հոգեւոր շի-
նութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի